մակոյկնին 'ի տես դրուած է։ Մեծ գործատուն մը, յորում Գրբանչեգի համբաւաւոր ձորոյն վարդի իւղոյ զտարան մի հաստատուած է։ Անդին փայտի չերտերով հիւսուած Ռուսական գեղեցիկ տուն մը։ Արաբիոյ և Պուռսայի ստիւսկ տներն, որոց ճաթռտոտ կաւը ոնապատի կիսիչ արևուն մէջ. կը կարծեցընէ զքեզ։ Կեդրոնական Աֆրիկիոյ և կարմրամորթից տձև խրճիթներն, որ դեռ ևս տեղով վայրենաց ազգին ստորնագոյն աստիճանը կը ցուցընեն։ Լաբոնացւոց անկաձև խրճիթներն և Եսքիմացւոց ցրտին տնակներն։

Շարունակելի Հ. ԳԷՈՐԳ ՊԱՍԵԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆ ՇՈՇԱՍՏԱՆԻ
Ի ՊԱԼԱՏԱՆ ԼՈՒՎՌԻ Ի ՓԱՐԻԶ

Լուվրի այն նոր սրահը՝ որք Պ. և Տ. Տիէօլաֆուայի 'ի Շօշաստան ըրած հետախուզութեանց նուիրեալ էին, այժմ բաց են հասարակութեան։ Այս գանձիճաբ արտաքոյ կարգի կարևորութիւն մ'ունին. այսկիսք կը սիրանան գեղեցիկ կիտուածանկարեալ որմոց հատուածներուն վրայ, յորս կը նշմարուին այլ և այլ պատմական անձինք, իրաբանչիւրն իրենց ժամանակաց ճոխապաճոյճ զգեստուք։ Ղերբին սրահին մէջ երկգլխի և հակայաձև խոյակ մը ամենուն ուշադրութիւնը կը գրաւէ. ամէն կողմ նշանաւոր առարկաք այցելուաց աչքը կը շլացնեն և հետաքրքրութիւնը կը զարթուցանեն։

Պարոն և Տիկին Տիէօլաֆուա յաջողդաբար երեք անգամ ճանապարհորդեր են 'ի Շօշաստան, որոց հրամանաւ կատարուած պեղմանց արդիւնքն եղաւ ոչ միայն հնախօսական տեսակէտով թանկագին առարկաներ գտնել, այլ նաև վերանորոգել նոր տարբերով պատմութեան ամենէն աւելի հետաքրքրական գարերէն մին։

Ցետ քսան և աւելի ևս դարերու, կրնամք ըսել որ ճանապարհորդք վերականգնեցին Արտաշիսի և Դարեհի թաղեալ պալատներ։ Կարելի չէ 'ի մէջ բերել ասա հետախուզից ջանից և աշխատութեան ամենայն հետեւանքները. այլ միայն նոր թանգարանին քանի մի հետաքրքրաշարժ առարկաները կ'ուզենք մեր ընթերցողաց ներկայացնել։

Բովանդակ հաւաքմունք կրկին մասանց բաժնուած են. առաջին սրահին մէջ զետեղուած են արքունի պահանորդաց աղեղնաւորքն, ասիներ, սանդղաբաժիններ, Մեծ բագաւորաց պալատէն հանուած հրաշալի կիսուաձանկարներ, և մեր թուականին առաջին և երկրորդ դարուց մէջ գործածուած յուզարկաւորութեան համար հողէ անօթներ։ Երկրորդ սրահին մէջ կան երկգլխի խոյակը, քանդակեալ քարինք, և արձանագրական յիշատակարանք։

Մեք ասա ոչ աղեղնաւորաց և ոչ ասիներուց վրայ պիտի խօսինք. վասնզի այս բազմագոյն խորաքանդակք, հրաշալի Մեսոպոտոմ աքեմենեան (achéménide) դարուց՝ դժուարաւ կը նկարագրուին։ Հարկ է աչքով տեսնել այն

digitised by A.R.A.R.@

կորիճ պատերազմողները և այն գոռող առիւծները, որպէս զի կարելի ըլլայ գաղափար մը ստանալ թարգմոս Պարսկաստանին նկարչական կամ զարդարիչ ճաշակին վերայ։ Մենք կը նախադասենք նկարագրել չէնքերը։

Մեր առաջին ձեւն (Զև 1) սեան գեղեցիկ խարիսխ մը կը ներկայացնէ, զոր կարծեմք ճարտարարուեստ ձեռք մը յօրիներ է. սոյն խարիսխը Դարեհի պալատին ողջ մնացած մասերէն մին է։ Առաջին ձեւոյն աջակողմը կը տեսնուի կիտուածանկար հրաշալի ազիւս մը. այս կիտուածանկար առարկայից մէջ կը տիրէ յաճախ մթին–կապուտակ գոյնն. պարսիկ յախճապակագործք մինչև ցարդ հաւատարիմ մնացեր են իրենց հարց ուանդութեան։ Սոյն կրկին առարկայից քով կը գտնուի գեղեցիկ ձեւով յախճապակւոյ կտոր



(Զև 1)

մը. այս կտորս է հրոյ փոքրիկ բագին մը, հողէ չինուած և կապտագոյն կիտուածանկարուք, սասանեան կամ պարթեւական գարերու գործ. բարձրութիւնն է 40 հարիւրորդամէգր, և այն ժամանակները առանձին կրօնական պաշտամանց կը ծառայէր։

Բայց 'ի հոյակապ և փառաւոր գիւտերէն, այս պեղմանց ժամանակ գտնուեցան նաև ուրիշ բազմաթիւ փղոսկրեայ, պղնձեայ, ալապաստրէ և կաւէ առարկաներ։ Բայց առանձին յիշատակութեան արժանի է գեղեցիկ հաւաքում մը քազդէացի, պարսիկ և ելամական կնքոց, որք նոր թանգարանին երկու ապակափեղկից մէջ գետեղեալք են։ Այս կնիքներս մեծաւ մասամբ կարծր քարէ գլանիկներ են, որոց վրայ այլ և այլ առարկաներ կան մեծ նրբութեամբ և ճարտարութեամբ չինուած։

digitised by A.R.A.R.@

Իսկ երկրորդ ձեւոյն մէջ (Ձև 2) կը ներկայացնենք հին քաղդէական տիարիթ քարէ շինուած գլանիկի մը պատկերը, յորում հին արձանագրութեամբ նուէրի մը տեսարանն նկարեալ է։ Իսկ միւս նկարն (Ձև 3) շօշական գլանիկ մ'է լազուարտէ շինուած, որ արմաւի ողկոյզներ կը ներկայացնէ։ Այնքան նուրբ արուեստով և ճաշակով յօրինեալ է սոյն գլանիկս, որ արդի ոսկերիչք կարող են ուսանել անոր տակաւին իրենց անծանօթ մնացած արուեստին գաղտնիքը։ Բաց աստի կը գտնուին եւ անդ ուրիշ աւելի նշանաւոր հնութեան մնացորդք. ինչպէս է, Արտաշիսի պալատան մէջ գտնուած հսկա-



(Ձև 2)



(Ձև 3)

յաձև և երկգլխի հոյակապ խոյակի մը մասն, որ Թանգարանին գլխաւոր զարդերէն մին է։ Աքեմինեան սոյն խոյակս ամբողջ է. մանաւանդ տեղ տեղ այնպէս ողջ և անարատ մնացեր է, որ կարծես թէ դեռ երէկ շինուած է։ Այն ցլագլուխք յիրաւի շատ գեղեցիկ կտորներ կը համարուին զարդարիչ քանդակագործութեան մէջ։ Եւրոպիոյ ոչ մի Թանգարան պերսեպօլսեան արուեստը ներկայացնող ասոր նման կտոր կամ նման առարկայ մ'ունի։

.Տարուեակերի .

digitised by A.R.A.R.@